Ստեփանավանի N2 հիմնական դպրոցի

ուսուցչի օգնական Արև Սերոբյան

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Ուսուցչի օգնականի ինստիտուտը հանրակրթական դպրոցներում ներդրվում է համընդհանուր ներառական կրթության անցման համատեքստում, որի հիմնական նպատակը բոլոր սովորողների համար որակյալ կրթության ապահովմանը աջակցող մանկավարժական որոշակի խնդիրների շուրջ համապատասխան ծառայությունների տրամադրումն է: Խնդիրների շրջանակը բացառապես ուղղված է սովորողի կամ սովորողների խմբի կողմից ուսումնական նյութի առավել համակողմանի յուրացման դժվարությունների բացահայտմանը,հոգեբանական խոչընդոտների հաղթահարմանը և առանձին դեպքերում նաև մանկավարժամեթոդական հնարների կիրառման միջոցով առարկայական ուսումնական նյութի յուրացմանը:

Ուսուցչի օգնականի պաշտոնային պարտականությունները

1. օգնում է ուսուցիչներին հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորման և իրականացման գործընթացներում
2. աջակցում է ԱՈՒՊ-ի իրականացմանը՝ համագործակցելով տվյալ սովորողին դասավանդող ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրողների և ծնողների հետ
3. աջակցում է ուսուցիչներին հանրակրթության պետական չափորոշիչով և առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար՝ ԱՈՒՊ-ով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման գործընթացներում՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ,
4. ըստ հաստատության տնօրինության և ուսուցչի կողմից առաջադրված նպատակի՝ դասարանում իրականացնում է սովորողի ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ, դրանց վերաբերյալ կատարում վերլուծություններ,
5. օժանդակում է ուսուցիչներին բոլոր, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարի ունեցող սովորողների համար ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում,
6. մասնակցում է ուսուցիչների կողմից դասերի պլանավորման աշխատանքներին,
7. ուսոիցիչների հետ միասին բացահայտում,դիտարկում, հետազոտում է երեխաների ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրները,
8. նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը,
9. հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ո ւարժանապատվությունը,
10. համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով,
11. մասնակցում է հաստատության մեթոդիավորումների աշխատանքներին,
12. պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները,
13. սոցիալական աջակցության տարածքային գործակալության հայտի հիման վրա, սոցիալական դեպքի վարման շրջանակներում մասնակցում է համակարգող և

խորհրդատվական մարմինների, ինչպես նաև բազմամասնագիտական խմբի աշխատանքներին:

	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետներ	Մասնակիցներ
1.	ԿԱՊԿ ունեցող աշակերտների փաստաթղթերի ուսումնասիրում և համակարգում, ՏՄԱԿ-ի կողմից տրված արձանագրությունների, եզրակացությունների, ֆունկցիոնալության նկարագրի ուսումնասիրում	տարեսկիզբ	տնօրեն, փոխտնօրեն, ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցման թիմ, ծնող
2.	ԿԱՊԿ ունեցող աշակերտների անձնական թղթապանակի ստեղծում թարմացում	Տարվա ընթացքում	տնօրեն, փոխտնօրեն, ուսուցչի օգնական
3.	Աշխատանքային պլանի մշակում՝ ելնելով ԿԱՊԿ ունեցող աշակերտների զարգացման առանձնահատկություններից	տարեսկիզբ	տնօրեն, փոխտնօրեն, ուսուցչի օգնական
4.	Աշխատանքային գրաֆիկի կազմում /աշխատանք դասի ընթացքում և դասից դուրս/	տարեսկիզբ	տնօրեն, փոխտնօրեն, ուսուցչի օգնական
5.	ԿԱՊԿ ունեցող աշակերտների կարիքներից բխող միջավայրի հարմարեցում/ դասարանում, դասարանից դուրս/	Տարվա ընթացքում	տնօրեն, փոխտնօրեն, ուսուցչի օգնական, ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցման թիմ,ծնող
6.	Համագործակցություն ուսուցիչների հետ աշխատանքային արդյունավետ ռազմավարության մշակում/ ինտերակտիվ մեթոդական նյութերի, դիդակտիկ պարագաների տրամադրում/	Տարվա ընթացքում	փոխտնօրեն, ուսուցչի օգնական, ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցման թիմ
7.	Ուսուցչի համաձայնությամբ, համագործակցության սկզբունքով ԱՌԻՊ-ի համապատասխան բաժնում աշակերտին տրամադրվող աջակցության պլանավորում, ԱՌԻՊ-Ի վարում	Տարվա ընթացքում	փոխտնօրեն,ուսուցչի օգնական, ուսուցիչներ,մանկավարժահոգեբանական աջակցման թիմ
8.	աջակցություն ԿԱՊԿ ունեցող աշակերտներին և ոչ միայն	Տարվա ընթացքում	Ուսուցչի օգնական, ուսուցիչներ,մանկավարժահոգեբա

	դասարանային այլ նաև արտադասարանական աշխատանքների միջոցով/ լրացուցիչ աշխատանքներ, դասապատրաստում/		նական աջակցման թիմ
9.	Օգնություն ուսուցչին դասի պլանավորման և իրականացման հարցում	Տարվա ընթացքում	Ուսուցչի օգնական, դասավանդող ուսուցիչներ
10.	Մասնակցություն ԱՌԻՊ-ի վերաբերյալ խմբային ժողովներին, ինչպես նաև մշտադիտարկման , ընթացիկ, կիսամյակային և տարեկան ամփոփիչ գնահատման գործընթացին:	Տարվա ընթացքում	Տնօրեն , փոխտնօրեն, ուսուցչի օգնական , ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցման թիմ, ծնող
11.	Ընթացիկ աշխատանքների, աշակերտի զարգացման դինամիկայի և առկա խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում ուսումնառության գործընթացի մասնակիցներին	Տարվա ընթացքում	Տնօրեն , փոխտնօրեն, ուսուցչի օգնական , ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցման թիմ, ծնող
12.	Պարբերաբար հանդիպումներ , քննարկումներ, համագործակցություն դպրոցի մեթոդմիավորումների անդամների և ՄԱԾԱՊ-ի թիմի անդամների հետ	Տարվա ընթացքում	Տնօրեն , փոխտնօրեն, ուսուցչի օգնական , ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցման թիմ, ծնող
13.	Ծնող- աշակերտ-դպրոց,փոխադարձ կապի ապահովում, համագործակցության պահպանում	Տարվա ընթացքում	Տնօրեն , փոխտնօրեն, ուսուցչի օգնական , ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցման թիմ, ծնող
14.	Թեմատիկ և տեղեկատվական սեմինարների կազմակերպում, ծնողների, ուսուցիչների ներգրավում	Տարվա ընթացքում	Տնօրեն , փոխտնօրեն, ուսուցչի օգնական , ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցման թիմ, ծնող
15.	Կատարված աշխատանքների արդյունքների վերլուծություն, հաշվետվության ներկայացում վերահսկող մարմիններին	տարեվերջ	Տնօրեն , փոխտնօրեն, ուսուցչի օգնական , ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցման թիմ, ծնող

Ներառական կրթությունը և դրա գործնական կիրառումը հանրակրթական ուսումնական հաստատություններում հանդիսանում է յուրաքանչյուր , այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթության իրավունքի իրացման հնարավորություն , որն իր հերթին ապահովում է կրթության մատչելիություն՝ անկախ երեխաների միմյանցից տարբերվող ուժեղ կողմերի:

2023 թվականի հունվար ամսվա դրությամբ ներառական կրթության ծրագրում ընդգրկված են եղել 27 ԿԱՊԿ ունեցող աշակերտներ.

Կարիքը	Ընդհանուր թվաքանակ	Առաջնային	Երկրորդային	Թ	Մ	Ծ
Շարժողական ֆունկցիաների խանգարումներ	3	1	2	2		1
Ձայնի և խոսքի ֆունկցիաների խանգարումներ	16	13	5	6	9	1
Տեսողական ֆունկցիաների խանգարումներ	1		1	1		
Լսողության ֆունկցիաների խանգարումներ	1	1			1	
Ինտելեկտուալ/մտավոր/ ֆունկցիաների խանգարումներ	24	10	14	14	9	1

2023թ.-ի ապրիլի 25-28-ը ՏՄԱԿ-ի կողմից իրականացվեց նոր գործիքակազմով բոլոր 27 աշակերտների վերագնահատում և 4 նոր աշակերտների / Մուրադյան Էրիկա 3-րդ դասարան, Մուրադյան Արսեն 5-րդ դասարան, Սաֆարյան Սաքո 4-րդ դասարան և Մուրադյան Սյուզաննա 8-րդ դասարան/ գնահատում, որի արդյունքները պարզ կլինեն սեպտեմբեր ամսին: Հնարավոր է լինի կարիքների և աստիճանների փոփոխություններ:

2022-2023 ուստարվա քննական դասարաններից 9-րդ դասարանի 1 ԿԱՊԿ ունեցող աշակերտ / Սուքիասյան Սերգո/, ծնողի դիմումի համաձայն ազատվել է քննություններից և ավարտել հիմնական դպրոցը, իսկ 4-րդ դասարանի 6- ԿԱՊԿ ունեցող աշակերտներ/ Սաքանյան Ժորա, Ջաղինյան Էլեն, Մալերյան Ռաֆայել, Ներսիսյան Սմբատ, Հովհաննիսյան Լուսինե, Այվազյան Նարեկ/ հանձնել են քննությունները և փոխադրվել 5-րդ դասարան:

Այսպիսով տարեվերջին ունենք ներառված 26 աշակերտներ հետևյալ աստիճանի խանգարումներով

2- ծանր, 15-միջին, 9-թեթև :

Դպրոցի աշակերտներին /այդ թվում նաև ներառված / անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերվել դպրոցի մանկավարժահոգեբանական թիմի անդամների կողմից: Աշխատանքներն իրականացվել են նախապես մշակված պլանի համաձայն: Կատարվել են նաև պլանից դուրս աշխատանքներ ըստ անհրաժեշտության: Աջակցություն է ցուցաբերվել թե դասերին, թե արտադասարանային միջոցառումներին:

Ստորև ներկայացնում եմ այն երեխաների ցուցակը, որոնք ներգրավված են իմ աշխատանքային գրաֆիկին, որոնց հետ աշխատել եմ ամբողջ տարվա ընթացքում:

	Անուն ազգանուն	*Դասարան*	*Տարեկան նպատակ*	*Կատարված աշխատանքներ*	*Ստացված արդյունքներ:*
1.	Խաթոյան Արինա	1-ին <<բ>>	Լիարժեք իմանա տառերը: Կարողանա կապակցել հնչյունները և ճիշտ արտասանել բառերը: Կարողանա հմտանալ գրավոր աշխատանքներ կատարելու գործընթացում: Կարողանա ճանաչել երկնիշ թվերը: Կարողանա կատարել երկնիշ թվերի հանում, գումարում:	Կատարվել են դիտարկումներ: Կատարվել են և դասարանային և արտադասարանա-կան աշխատանքներ: Արտադասարանա-կան աշխատանքները կատարվել են դասապատրաստման տեսքով: Անց է կացվել համատեղ դասեր, որի արդյունքում վեր են հանվել Արինայի խնդիրները:	Կարողանում է է արտագրություններ կատարել: Սակայն չի կարողանում կապակցել հնչյունները և ճիշտ արտասանել բառերը: Ճանաչում է երկնիշ թվերը: Կարողանում է կատարել երկնիշ թվերի հանում, գումարում:
2.	Համբարյան Աշոտ	1-ին <<բ>>	Կարողանա ճանաչել տառերի որոշ մասը: Կարողանա կետերի օգնությամբ գրել որոշ տառեր: Կարողանա հաշվել 1-10 թվերը: Ճանաչի	Կատարվել են դիտարկումներ: Կատարվել են և դասարանային և արտադասարանա-կան աշխատանքներ: Անց է կացվել համատեղ դասեր, որի արդյունքում վեր են հանվել Աշոտի	Կարողանում է ճանաչել մի քանի տառեր: Կարողանում է կետերի օգնությամբ գրել որոշ տառեր, սակայն դժվարությամբ: Կարողանում է հաշվել 1-10 թվերը: Ճանաչում է թվերի պատկերները:

			թվերի պատկերները:	խնդիրները:	
3.	Քալաշյան Վահագն	2-րդ <<ա>>	Կարողանա կատարել արտագրություններ առանց սխալների և բացթողումների: Կարողանա վանկատել բառերը: Իմանա մեծատառ գրելու կանոնը: Կարողանա կատարել երկնիշ թվերի հանում,գումարում:	Կատարվել են դիտարկումներ: Կատարվել են և դասարանային և արտադասարանա-կան աշխատանքներ: Անց է կացվել համատեղ դասեր, որի արդյունքում վեր են հանվել Վահագնի խնդիրները:	Կարողանում է կատարել արտագրություններ որոշ բացթողումներով: Դժվարությամբ է վանկատում բառերը: Կարողանում է կատարել երկնիշ թվերի հանում,գումարում: Կարողանում է հիշել 2-ի և 3-ի աղյուսակը:
4.	Այվազյան Նարեկ	4-րդ <<բ>>	Կարողանա կատարել արտագրություններ առանց սխալների և բացթողումների: Կարողանա հասկանալ ընթերցած նյութի իմաստը և ճիշտ վերարտադրել: Կարողանա ճանաչել երկնիշ թվերը և կատարել հանում,գումարում փայտիկների օգնությամբ:	Կատարվել են և դասարանային և արտադասարանակա-ն աշխատանքներ: Արտադասարանակա-ն աշխատանքները կատարվել են դասապատրաստման տեսքով: Անց է կացվել համատեղ դասեր, որի արդյունքում վեր են հանվել Նարեկի խնդիրները:	Կարողանում է կատարել արտագրություններ, սակայն սխալներով, բացթողումներով: Ընթերցում է տեքստը,սակայն չի կարողանում վերարտադրել այն: Դժվարությամբ է կատարում հանում և գումարում 10-ի սահմանում: Բազմապատկման աղյուսակը դեռևս չգիտի,շփոթում է:
5.	Մալերյան Ռաֆայել	4-րդ <<բ>>	Կարողանա առանց սխալներ կատարելու արտագրել տրված նյութը: Կարողանա թելադրություններ գրել առանց սխալների: Կարողանա մտապահել ուղղագրություն պարունակող բառերը: Կարողանա արագ	Կատարվել են և դասարանային և արտադասարանակա-ն աշխատանքներ: Արտադասարանակա-ն աշխատանքները կատարվել են դասապատրաստման տեսքով: Անց է կացվել համատեղ դասեր, որի արդյունքում վեր են հանվել Ռաֆայելի խնդիրները:	Ռաֆայելը կատարում է արտագրություններ առանց սխալների: Թելադրություններ գրելիս թույլ է տալիս որոշ սխալներ: Գիտի 2-ի, 3-ի, 5-ի աղյուսակները: Կատարում է հանում գումարում երկնիշ թվերով: Եռանիշ թվերով մի փոքր դժվարանում է:

			մտածել Կարողանա առանց սխալների հանում գումարում կատարել:		
6.	Հովհաննիս-յան Լուսինե	4-րդ <<բ>>	Կարողանա կատարել արտագրություններ՝ առանց սխալներ թույլ տալու և տառային բացթողումներ կատարելու: Տառերը գրի ճանաչելով, այլ ոչ թե արտանկարելով: Կարողանա կատարել երկնիշ թվերով հանում գումարում:	Կատարվել են և դասարանային և արտադասարանական աշխատանքներ: Արտադասարանական աշխատանքները կատարվել են դասապատրաստման տեսքով: Անց է կացվել համատեղ դասեր, որի արդյունքում վեր են հանվել Լուսինեի խնդիրները:	Կարողանում է արտագրություն կատարել արտանկարման եղանակով: Թելադրություն գրելիս չի կարողանում հիշել բոլոր տառերը: Կարողանում է կատարել երկնիշ թվերի հանում և գումարում:
7.	Ներսիսյան Սմբատ	4-րդ <<բ>>	Կարողանա առանց սխալներ կատարելու արտագրել տրված նյութը: Կարողանա Թելադրությունները գրել առանց սխալների: Կարողանա մտապահել ուղղագրություն պարունակող բառերը:Կարողանա արագ մտածել Կարողանա առանց սխալների հանում, գումարում կատարել:	Կատարվել են դիտարկումներ, անհատական և խմբային աշխատանքներ թե դասարանային ֆորմատով, թե արտադասարանային պարապմունքների տեսքով: Անց է կացվել համատեղ դասեր, որի արդյունքում վեր են հանվել Սմբատի խնդիրները:	Կարողանում է կատարել արտագրություններ առանց սխալների: Թելադրություններ գրելիս թույլ է տալիս որոշ սխալներ: Գիտի 2-ի, 3-ի, 5-ի աղյուսակները: Կատարում է հանում գումարում երկնիշ և եռանիշ թվերով:
8.	Ջաղինյան Արմեն	5-րդ <<բ>>	Կարողանա ճիշտ հայերենով կազմել նախադասություններ:Կարողանա գրել թելադրություններ:	Կատարվել են և դասարանային և արտադասարանական աշխատանքներ: Արտադասարանական աշխատանքները	Նախադասություններ կազմելիս օգտագործում է ոչ լիարժեք բառեր: Լավ չի մտապահում ուղղագրություն

			Կարողանա մտապահել ուղղագրություն պարունակող բառերը: Կկարողանա ինքնուրույն մտածել և լուծումներ առաջադրել մաթեմատիկական պարզ խնդիրներին:	կատարվել են դասապատրաստման տեսքով: Անց է կացվել համատեղ դասեր, որի արդյունքում վեր են հանվել Արմենի խնդիրները:	պարունակող բառերը: Կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ:
9.	Ջիլավյան Վարդան	6-րդ <<ա>>	Կարողանա կորդինացնել շարժումները և գրել գրավոր աշխատանքները: Զարգացնել թելադրությամբ պարզ բառեր և բառակապակցություններ գրելու հմտությունները: Կարողանա նախադասության մեջ տարբերակել գոյական,ածական, թվական անունները :	Տարվա ընթացքում կատարվել են դասալսումներ, համատեղ դասեր են իրականացվել: Աշխատանքներ են տարվել և դասերի ընթացքում և դասերից դուրս: Կատարվել են ապլիկացիոն և զարգացնող աշխատանքներ: Աջակցություն է ցուցաբերվել թեմատիկ աշխատանքների ժամանակ:	Չի կարողանում ինքնուրույն գրել գրավոր աշխատանքներ: Բառերը գրելիս դժվարանում է: Կարողանում է նախադասության մեջ տարբերակել խոսքի մասերը: Կարողանում է բանավոր կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ:
10.	Միրզոյան Էդիկ	6-րդ <<ա>>	Կարողանա գրել պարզ բառերը գրեթե անսխալ, աստիճանաբար անցում կատարելով բարդ բառերին: Կիմանա դասագրքի բարդ ուղղագրություն ունեցող բառերի մի մասը: Կարողանա յուրացնել աղյուսակը ամբողջությամբ: Կարողանա ինքնուրույն մտածել և լուծումներ առաջադրել	Կատարվել են և դասարանային և արտադասարանական աշխատանքներ: Արտադասարանական աշխատանքները կատարվել են դասապատրաստման տեսքով:	Կարողանում է կատարել արտագրություններ առանց սխալների: Թելադրություններ գրելիս թույլ է տալիս որոշ սխալներ: Կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ: Չի կարողանում ինքնուրույն լուծել խնդիրները:

			մաթեմատիկական պարզ խնդիրներին:		
11.	Պետրոսյան Նարեկ	6-րդ <<բ>>	Իմանա բառերի ուղղագրությունը: Հարստացնի բառապաշար: Հստակ տարբերակի տպագիր և ձեռագիր տառերը, բաղաձայն և ձայնավոր հնչյունները: Ճանաչի երկրաչափական պատկերները, ասի դրանց անվանումները:	Անհատական մոտեցում է ցուցաբերվել յուրաքանչյուր դասի ընթացքում: Տարվա ընթացքում կատարվել են դասալսումներ, համատեղ դասեր են իրականացվել: Աշխատանքներ են տարվել և դասերի ընթացքում և դասերից դուրս: Կատարվել են ապիկացիոն և զարգացնող աշխատանքներ: Աջակցություն է ցուցաբերվել թեմատիկ աշխատանքների ժամանակ:	Կարողանում է կատարել 10-ի սահմանում հանում և գումարում: Չի կարողանում կատարելպարզ մաթեմատիկական գործողություններ: Կարողանում է արտանկարել տառերը՝ արտագրություններ կատարելով:
12.	Այվազյան Արեն	8-րդ <<բ>>	Իմանա բազմապատկման աղյուսակը: Արագ կողմնորոշվի գործողություններ կատարելիս: Տարբերակի թվերի կարգերը և հարյուրավորների սահմանում կատարի գործողություններ կարգային անցումներով: Զարգացնել ընթերցանությանտեխնիկայի տարրական կանոնները վանկերի, պարզ բառերի,բառակապակցությունների,նախադասությունների ընթերցում/,	Կատարվել են և դասարանային և արտադասարանական աշխատանքներ: Արտադասարանական աշխատանքները կատարվել են դասապատրաստման սենյակում: Անց է կացվել համատեղ դասեր, որի արդյունքում վեր են հանվել Արենի խնդիրները:	Կարողանում է արտագրություններ կատարել : Ճանաչում է բոլոր տառերը: Կարողանում է տասնյակների սահմանում հանում, գումարում կատարել: Պարզագույն խնդիրները կարողանում է լուծել: Դժվարանում է թելադրություններ գրել, թույլ է տալիս ուղղագրական սխալներ:

			ընթերցածը ճիշտ ընկալելու, վերարտադրելու, հարցերին պատասխանելու կարողություններն ու հմտությունները:		
13.	Սուքիասյան Սերգո	9-րդ <<բ>>	Չիմացած տառերի իմացություն: Բառապաշարի հարստացում: Բազմապատկման աղյուսակի յուրացում: Կարողանա արագ կողմնորոշվել գործողություններ կատարելիս և իրականացնել դրանք ոչ թե մատների օգնությամբ, այլ մտովի:	Աջակցություն է ցուցաբերվել թեմատիկ աշխատանքների ժամանակ:Տարվա ընթացքում կատարվել են դասալսումներ, համատեղ դասեր են իրականացվել: Աշխատանքներ են տարվել և դասերի ընթացքում և դասերից դուրս: Կատարվել են ապլիկացիոն և զարգացնող աշխատանքներ:	Կարողանում է կատարել մաթեմատիկական պարզ գործողություններ: Ճանաչում է երկրաչափական պատկերները: Տառերի մեծամասնությունը ճանաչում է, դժվարանում է գրել թելադրություններ: